


## “Շրջակա միջավայր” օնլայն ծրագիր

2005-2006 թվ. ուսումնական տարվա սկզբից Արարատի մարզի Ազատավան գյուղի միջնակարգ դպրոցի 8 աշակերտներից և անգլերենի ուսուցչուհուց բաղկացած



աշխատանքային խումբը միացավ Ֆինլանդիայի կողմից կազմակերպված ENO, կամ շրջակա միջավայրն օնլայն (<http://eno.joensuu.fi/basics/briefly.htm>)

միջազգային ծրագրին, որն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի զարգացման համար համընդհանուր վիրտուալ դպրոց, ուր մեկ ուսումնական տարվա ընթացքում ուսումնասիրվում են շրջակա միջավայրին նվիրված տարբեր թեմաներ, և որը նաև ճանաչվել է Ստոկհոլմի մրցանակաբաշխության հաղթանակած լավագույն

ծրագրերից մեկը: Այս ինտերնետային ծրագրի հիմնական նպատակն է խորացնել կրթության մեջ շրջակա միջավայրին առնչվող թեմաների ուսումնասիրությունը, ընդլայնել միջազգային ճանաչողականությունն այս ոլորտում կրթական գործընթացում ինտեգրել նախագծային աշխատանքների նոր մեթոդներ, զարգացնել նոր հմտություններ ուսուցիչների և աշակերտների մոտ, ոլորտը ընդգրկել դասապլանում, ներմուծել կրթական բնագավառ և աջակցել դրա զարգացմանը: Այս նպատակներին հասնելու համար ENO –ն համագործակցում է UNEP-ի, UNESCO-ի, UNICEF-ի, UNDP-ի և շրջակա միջավայրի պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և այլ համացանցերի հետ:

Այս տարի ծրագրում ընդգրկված էին 75 տարբեր երկրներից մոտավորապես 200 դպրոցներ, որոնց թվում էր նաև Հայաստանի Արարատ մարզի Ազատավանի միջնակարգ դպրոցը: Այս ուսումնական տարում ուսումնասիրվում էին շրջակա միջավայրին նվիրված հետևյալ չորս թեմաները:

1. “Վայրը, ուր մենք ապրում ենք” – Աշակերտները խոսեցին ֆիզիկական և հասարակական միջավայրերի, իրենց հայրենի գյուղի/քաղաքի, սիրելի վայրերի և ընտանիքների մասին, շարադրություններ գրեցին և պատմություններ ձայնագրեցին:
2. “Մա մեր բնությունն է” – Մասնակիցները սովորեցին կայուն զարգացման, կլիմայական գոտիների, վտանգված տեսակների, անտառների և ջրի մասին:
3. “Ինչպես ենք ղեկավարում մեր կյանքը” – Աշխատանքային խմբերը իրենց մտքերը կիսեցին բնական միջավայրի վերաբերյալ. Ինչը և ինչպես է սպառվում (թուղթ, ջուր, էլեկտրականություն, տրանսպորտ և այլն):
4. “Մա մեր մշակույթն է” – Աշակերտները քննարկեցին մշակութային բնագավառը, երաժշտություն, ազգային սպորտաձևեր և ավանդական ուտեստներ:

“Երբ մենք առաջին անգամ լսեցինք ENO-ի գործունեության մասին և ծանոթացանք ծրագրի պաշտոնական ինտերնետային կայքին, մենք անմիջապես սկսեցինք օգտվել օնլայն համագործակցության այս հնարավորությունից: Քանի որ մեր գյուղը գտնվում է գեղատեսիլ Արարատյան դաշտավայրում, մենք համոզված էինք, որ աշխարհի

բոլոր ծայրերում գտնվող աշակերտներին պատմելու և նրանցից սովորելու շատ և նոր հետաքրքիր բաներ կունենանք”,- պատմում է խմբի առաջնորդող ուսուցիչ Մեդա Հովհակիմյանը:



Ազատավանի աշակերտների ծրագրին մասնակցությունը սկսվեց սեպտեմբերի 21-ին իրականացված ծառատունկով: Օրը հայտարարվել էր որպես միջազգային խաղաղության օր, և մասնակից բոլոր երկրների երեխաների հետ մեր աշխատանքային խումբը փոքրիկ այգի պատրաստեց՝ նվիրված Հայաստանի անկախության և միջազգային խաղաղության օրերին: Օնլայն ծրագրի առաջին իսկ օրերից

սկսած աշակերտներն իրենց ուսուցչի հետ միասին սկսեցին աշխատել՝ կատարելու ծրագրի պահանջները և իրականացնելու շաբաթվա առաջադրանքները: Աշակերտները հստակ գիտեին իրենց պարտականությունները ընթացիկ և առաջիկա աշխատանքների հետ կապված դասապլանները, թեմաներն ու աշխատանքների ժամանակացույցը տեղադրված էին ինտերնետային կայքում՝ <http://eno.joensuu.fi/themes/themes.htm>: Յուրաքանչյուր թեմայի ավարտին մեկ շաբաթ հատկացվում էր արդյունքների ամփոփմանը և դրանք համայնքի անդամների ներկայացմանը: ENO-ն իր մեջ ներառում և զարգացնում է կենսաբանության, աշխարհագրության, քաղաքացիական կրթության, անզլերենի, արվեստի և համակարգչային հմտություններ: <<Աշակերտները սովորում են ավելի քան 70 տարբեր երկրների բնապահպանական խնդիրների և նոր տեսակների մասին, ծանոթանում են տարբեր երկրների դիրքորոշմանը միևնույն խնդրի շուրջ և սոցիալական միջավայրերին, նրանք սովորում են, որ էկոլոգիայի խնդիրները տեղայնացված չեն, այլ դրանք համընդհանուր խնդիրներ են և պահանջում են համընդհանուր լուծումներ, և իրենց ուսուցիչների հետ փորձում են առաջադրված խնդիրների համար գտնել համընդհանուր լուծումներ: Աշակերտների համար հրաշալի խթան է՝ տեսնել իրենց սեփական աշխատանքները ENO-ի կայքում: Ծրագրին մասնակցությունը օգնում է նրանց բարելավել իրենց անզլերենի գիտելիքները և տալիս է հնարավորություն՝ հաղորդակցվել տարբեր երկրների աշակերտների հետ>>, ասում է դպրոցի աշխարհագրության ուսուցչուհին:

2006թ.-ի մայիսին Ազատավանի դպրոցի թիմը իր աշխատանքի արդյունքները ներկայացրեց համայնքին, դպրոցի ուսուցիչներին և մյուս աշակերտներին: Աշակերտների բանավոր խոսքը համեմված էր Power Point ծրագրով պատրաստված շնորհանդեսով: Նրանք հանդիսատեսին ներկայացրեցին ծրագրի նպատակները, խնդիրներն ու օնլայն համագործակցության արդյունքները: Իրենց ձեռքբերումը ավելի արդյունավետ դարձնելու համար՝ աշակերտները ինտերնետային կայք էին պատրաստել, որն ամփոփում էր կատարված աշխատանքներն ու ստացած գիտելիքները:

Ինչպես նշեց Արարատի մարզային կրթական կոորդինատոր Ֆենյա Եփրեմյանը ծրագրի ամփոփման ժամանակ՝ “Մա օգտակար հղում է ոչ միայն դպրոցի, այլ նաև

բոլոր այն աշակերտների համար, ովքեր հետաքրքրվում են անգլերենով և բնապահպանական խնդիրներով”:

Մասնակիցների համար հաջողության առաջին չափանիշը անգլերենի բարելավումն էր, այնուհետև շրջապատող միջավայրի մասին առավել խոր գիտելիքների ձեռք բերումը և ինքնաճանաչողության բարձրացումը:



“Մեր դպրոցը շատ բարձր է գնահատում ENO-ի կողմից ընձեռնված ուսումնական այս հնարավորությունը: Մեր ուսուցիչներն ու աշակերտներն ունեն համընդհանուր արժեքներ, որոնք բնորոշ են բոլոր երկրներին՝ անկախ քաղաքական, տնտեսական և այլ ասպեկտներից: Դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները հավատացած են, որ բոլոր խնդիրները հնարավոր է լուծել հաստատուն ուսուցողական գործընթացում, սովորելու և փորձի

փոխանակման միջոցով համընդհանուր համայնքի մեջ ինտեգրվելու միջոցով: Մեր դպրոցը, Փրոջեքթ Հարմոնի կազմակերպության կողմից իրականացվող Հայաստանի դպրոցների փոխկապակցման ծրագրի աջակցությամբ, օնլայն ծրագրերին մասնակցության բավական մեծ փորձ ունի: Միայն ի շնորհիվ կազմակերպության կողմից տրամադրած տեխնիկական և ծրագրային օժանդակության մենք ի վիճակի եղանք իրականացնելու նմանատիպ աշխատանք”, նշեց դպրոցի տնօրեն Էմմա Նիկողոսյանը:

ENO-ի նպատակները շատ ավելի են, քան միայն ուսուցումն ու համագործակցությունը: Օնլայն նախագծի մասնակիցները բարձր են գնահատում համընդհանուր և տեղայնացված մակարդակում կատարած աշխատանքները, որը հրաշալի հնարավորություն է տալիս սիրել և հարգել այլոց միջավայրը, մշակույթն ու կրոնը, ստեղծելով միասնական արժեքներ: